Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 11

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<12>> հուլիսի 2023թ. ք. Երևան

2023 թվականի հուլիսի 12-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը: Նիստից բացակայում էին հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը և հանձնաժողովի անդամ :

Նիստն արձանագրում էր հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1.Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

2.Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

3. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

4. «ՊՐՈՖ-ԼԱԲ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական

վկայագրման լիցենզիայի գործունեության վայրի փոփոխության համար ներկայացված դիմումի քննարկում:

1. Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝

«ԼԻՄԻՏԼԵՍՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի հունիսի 29-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի հունիսի 30-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԼԻՄԻՏԼԵՍՍ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

Ֆիզիկական անձ՝ Ռաֆայել Գրիգորիի Կասպարյանի 04.07.2023թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Ֆիզիկական անձ՝ Ռաֆայել Գրիգորիի Կասպարյանի 04.07.2023թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին և պարզաբանեց, որ նիստի քննարկմանը ներկայացված հայտը ուսումնասիրվել է լիցենզավորման և թույլտվությունների բաժնի կողմից, ստուգվել են ներկայացված ավտոմոբիլի տեխնիկական զննություն անցնելու փաստը և գազաբալոնների վկայագրման և ավտոմոբիլի սակաչափիչի ստուգաչափման փաստաթղթերի բնօրինակները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐԻԻ ԿԱՍՊԱՐՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. Ֆիզիկական անձ Արմեն Կառլենի Ունուսյանի ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N11073 լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի քննարկում:

Քննարկվեց՝

Ֆիզիկական անձ Արմեն Կառլենի Ունուսյանի 2023 թվականի հուլիսի 11-ի դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N11073 լիցենզիան և լիցենզիայի N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

Ներկայացրեց Ֆիզիկական անձ Արմեն Կառլենի Ունուսյանի 2023 թվականի հուլիսի 11-ի դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N11073 լիցենզիան և լիցենզիայի N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ լիցենզիայի և ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՐՄԵՆ ԿԱՌԼԵՆԻ ՈՒՆՈՒՍՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

4. «ՊՐՈՖ-ԼԱԲ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ00066 լիցենզիայի գործունեության վայրի փոփոխման համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝

«ՊՐՈՖ-ԼԱԲ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի հուլիսի 6-ի դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ Կազմակերպությանը տրամադրված՝ Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ00066 լիցենզիայի գործունեության վայրի փոփոխման մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց Կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների

պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ00066 լիցենզիայի գործունեության վայրի փոփոխման մասին դիմումը և տեղեկացրեց, որ Կազմակերպությունը 2022 թվականի նոյեմբերի 10-ին ստացել է սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Արարատյան փողոց 20 հասցեում: Կազմակերպության կողմից ներկայացվել է դիմում՝ գործունեության վայրը ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց 90բ հասցե փոփոխելու համար: Նոր գործունեության վայրը համապատասխանում է ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի պահանջներին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը՝ մասնավորապես՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց 90բ հասցեում տեղակայված շինության հատակագիծը, շինության՝ արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում գրանցման վկայականը, տեխնոլոգիական սարքավորումներով հագեցվածությունը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՊՐՈՖ-ԼԱԲ» ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են <<Լիցենզավորման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի պահանջներին՝ ենթակա է բավարարման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան